ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ: ՊԱՏԵՐԱԶՄԸ ՎԵՐԱԾԵՔ ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔԻ: ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(Յոթերորդ ռազմավարություն)

Ինչպե՞ս ոգեշնչել մարդկանց և պահպանել նրանց մարտական ոգին: Գաղտնիքն այն է, որ նրանք ավելի քիչ մտածեն իրենց մասին և ավելի շատ՝ խմբի մասին: Ներգրավեք նրանց ատելի թշնամու դեմ խաչակրաց արշավանքին: Թող նրանք զգան, որ բանակի հաջողությունը, որպես ամբողջություն, կախված է իրենց գոյատևումից: Այն խմբում, որտեղ մարդիկ իսկապես կապված և միասնական են, տրամադրություններն ու զգացմունքները այնքան վարակիչ են, որ հեշտ է ոգեշնչել բանակը: Դուք պետք է բոլորից առաջ լինեք: Թող խրամատներում գտնվող զինվորները տեսնեն, որ դուք պատրաստ եք զոհաբերել ձեզ: Սա կոգեշնչի նրանց հետևել ձեզ և ձեր հավանությանը արժանանալու համար կծավալվի մրցակցություն: Պարգևատրումն ու պատիժը պետք է լինեն հազվադեպ, բայց նշանակալի իրադարձություններ: Հիշե՛ք. ոգեշնչված բանակը կարող է հրաշքներ գործել. ոգևորությունն ու ոգեշնչումը ավելի քան կփոխհատուցեն ցանկացած տեխնիկական և նյութական ռեսուրսների բացակայությունը:

ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Մենք բոլորս՝ մարդիկս, բնույթով եսասեր ենք: Ցանկացած իրավիճակում մեր մտքերն առաջին հերթին վերաբերում են սեփական շահերին: Ինչպե՞ս դա կանդրադառնա ինձ վրա: Կարո՞ղ է դա օգտակար լինել ինձ: Միևնույն ժամանակ, ըստ անհրաժեշտության, մենք փորձում ենք թաքցնել մեր ինքնասիրությունը՝ ինքներս մեզ վերագրելով ալտրուիստական[1] կամ անշահախնդիր դրդապատճառներ: Մեր կարծրացած եսասիրությունը, ինչպես նաև այն քողարկելու ունակությունը, իսկապես լուրջ խնդիր է ցանկացած առաջնորդի համար: Ձեզ կարող է թվալ, որ մարդիկ գործն անում են խանդավառությամբ, իսկական խանդավառությամբ, հենց այդպես են նրանք խոսում դրա մասին, դա հետևում է նրանց արարքներից: Այնուհետև, ոչ անմիջապես, դուք նկատում եք նշաններ, որ նրանցից որևէ մեկը, կամ գուցե ոչ մեկը, օգտագործում է իր դիրքը թիմում բացառապես իր շահերի համար: Մի օր դուք կգտնեք, որ կոլեկտիվը, ըստ էության, գոյություն չունի, և դուք փորձում եք ղեկավարել եսասեր և խորամանկ միայնակների բանակը:

Հենց այս պահին է, որ դուք սկսում եք մտածել բարոյական ոգու մասին, որ պետք է միջոց գտնել բանակը ոգեշնչելու, այն միավորելու և միայնակների հավաքակազմից թիմ դարձնելու, մեկ ամբողջություն դարձնելու համար: Այստեղ կան բազմաթիվ տարբերակներ: Դուք կարող եք խրախուսել ձեր մարդկանց, գովաբանել կամ պարգևատրել միայն այն բանի համար, որ հետագայում պարզեք, որ նրանց երես եք տվել, դրանով կերակրելով արդեն իսկ չափազանց ուռճացված եսասիրությունը: Կարող եք նաև փորձել պատիժների և կարգապահության խստացման ուղին, և կհասնեք նրան, որ մարդիկ կդառնանան և պաշտպանողական դիրք կգրավեն: Դուք կարող եք փորձել նրանց լուսավորել բոցավառ ելույթներով, գերել նրանց ընդհանուր գործով, բայց այսօր մարդիկ ցինիկ[2] են, նրանք միջաթափանց տեսնում են ձեր ամբողջ ներքինը:

Խնդիրն այն չէ, որ դուք ինչ-որ բան սխալ եք անում, այլ այն, որ ուշ եք սկսել: Դուք եկել եք այն մտքին, որ պետք է բարձրացնեք ձեր զորքերի բարոյական ոգին ոչ թե մինչև, այլ քայքայումն սկսվելուց հետո: Դա ձեր սխալն է: Սովորեք մեծ զորավարներից, հրամանատարներից և մեծ ոգեշնչողներից: Զինվորներին միավորելու և նրանց բարոյական ու մարտական ոգին բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ նրանք իրենց զգան ոչ միայն բանակի,այլև արդար գործի համար պայքարող բանակի մի մաս: Եվ եթե դուք չեք կարող դա անել, դուք պետք է սովորեք, թե ինչպես դա անել: Այս գիտակցումը կարող է շեղել նրանց սեփական եսասիրական հետաքրքրություններից և բավարարել մարդուն բնորոշ անհրաժեշտությունը՝ զգալ, որ իրենք իրենցից ավելի մեծ բանի մաս են կազմում: Որքան շատ են նրանք մտածում խմբի մասին, այնքան քիչ են մտածում իրենց մասին: Շուտով նրանք կսկսեն կապել իրենց սեփական հաջողությունները խմբի հաջողությունների հետ. նրանց շահերն ու ավելի գլոբալ շահերը կհամընկնեն: Այս տիպի բանակում բոլորը հասկանում են, որ

---

[1] **Ալտրուիզմը** ուրիշների մասին անշահախնդրաբար հոգալն ու սեփական շահերը զոհաբերելու պատրաստակամությունն է: https://hy.wiktionary.org/wiki/%D5%A1%D5%AC%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%AB%D5%A6%D5%B4

[2] **Ցինիզմ** (լատ. cynismus, հուն. xuvicriuog-կինիկների ուսմունքը), վերաբերմունք, որը բնութագրվում է ուրիշների դրդապատճառների նկատմամբ ընդհանուր անվստահությամբ, բարոյական հատկություն, որը արտահայտում է արհամարհական վերաբերմունք հասարակական մշակույթի, հոգևոր, բարոյական և այլ արժեքների հանդեպ: https://hy.wikipedia.org/wiki/%D5%91%D5%AB%D5%B6%D5%AB%D5%A6%D5%B4

եսասիրական պահվածքով ինքնին ոտնատակ են լինելու մյուսների աչքում: Մարդիկ ավելի զգայուն են մի տեսակ հավաքական գիտակցության նկատմամբ:

Այս վերաբերմունքը վարակիչ է. մարդիկ, ովքեր հայտնվում են սերտ, ոգեշնչված թիմում, ակամա ներծծվում են ընդհանուր ոգով: Նրանք, ովքեր ապստամբում են դրա դեմ կամ զբաղվում են եսասիրական վարքագծով, ինչ-որ կերպ աննկատորեն հայտնվում են մեկուսացված վիճակում: Դուք պետք է հասնեք այս վիճակին հենց այն պահից, երբ ղեկավարում եք խումբը:

Բարոյական ոգին պետք է գա վերևից, այսինքն՝ ձեզանից: Խմբում ճիշտ տրամադրություն ստեղծելու, թիմային ոգին պահպանելու ունակությունը զինվորական ոլորտում հայտնի է որպես «մարդկանց կառավարում»:

Պատմության մեծագույն զորավարները՝ Ալեքսանդր Մակեդոնացին, Հաննիբալը, Նապոլեոնը, այս արվեստի վարպետներ էին, որը ոչ միայն կարևոր էր զինվորականների համար, այլև մարտում կարող էր վճռորոշ գործոն լինել, որից էլ կախված էր կյանքն ու մահը, հաղթանակն ու պարտությունը:

Նապոլեոնը մի անգամ ասաց, որ պատերազմում «ֆիզիկական վիճակի դեմ մարտական ոգին գնահատվում է որպես երեքը ընդդեմ մեկի»: Նա նկատի ուներ, որ իր զորքերի մարտական ոգին վճռորոշ նշանակություն ուներ ճակատամարտի ելքի համար: Ոգեշնչված, հաղթական զինվորներով նա կարող էր հաղթել իրենից երեք անգամ մեծ բանակին:

Թիմում լավագույն մթնոլորտ ստեղծելու և կործանարար բարոյական խնդիրների առաջացումը կանխելու համար կիրառենք այս արվեստի վարպետների ստորև նկարագրված ութ քայլերից բաղկացած փորձը: Կարևորը դրանք բոլորը անցնելն է, կամ գոնե որքան հնարավոր է՝ դրանց մեջ ավելի կամ պակաս կարևորներ չկան, յուրաքանչյուր քայլ մեծ նշանակություն ունի:

Քայլ 1. Համախմբեք ձեր բանակը արդար գործի գաղափարի համար պայքարում

Հիմա ավելի քան երբևէ, մարդիկ զգում են ինչ-որ բանի հավատալու անհրաժեշտությունը: Նրանք զգում են մի դատարկություն, որը, եթե չվերահսկվի, կփորձեն լցնել հոգևոր թմրանյութերով կամ դատարկ ֆանտազիաներով: Բայց դուք կարող եք զսպել այս ձգտումը՝ այն ուղղորդելով և ցույց տալով նրանց մի բան, որի համար արժե պայքարել: Միավորեք մարդկանց, միավորեք նրանց որևէ գործի շուրջ, և մի քանի անհատներից դուք կստեղծեք էնտուզիազմով լեցուն մարտիկների բանակ:

Այսպիսի գործ կամ նպատակ կարող է դառնալ ցանկացած բան, բայց դուք պետք է ապացուցեք, որ այս նախաձեռնությունը արդիական է, համապատասխանում է ժամանակի ոգուն, որ ապագան նրա համար է, ուստի այն կարևոր է և պետք է պաշտպանել: Դուք կարող եք, եթե զգում եք, որ դա անհրաժեշտ է, դրան որոշակի ոգևորություն հաղորդել: Լավագույնն այն է, որ եթե կա որևէ հակառակորդ՝ ընդհանուր ատելության օբյեկտ կամ պարզապես մեկը, ով պետք է ապացուցի իր ճշմարտացիությունը, դիմակայության իրավիճակում խմբի համար ավելի հեշտ է համախմբել իրենց շարքերը: Եթե բաց թողնեք այս քայլը, ռիսկի կդիմք մնալ եսասեր վարձկանների բանակի հետ, և այն ճակատագիրը, որը սովորաբար սպասում է այդպիսի բանակներին, կվաստակի արժանին:

Քայլ 2. Հոգ տարեք, որպեսզի «ստամոքսը լիքը լինի»

Մարդիկ երկար չեն կարող ոգեշնչվել, եթե իրենց նյութական կարիքները չեն բավարարվում: Եթե նրանք զգան, որ իրենց օգտագործում են, շահագործում, ապա

բնական եսասիրությունը անմիջապես գլուխ կբարձրացնի, և նրանք կսկսեն անջատվել խմբից: Մարդկանց միավորելու համար անհրաժեշտ է ազնվաբարո գործ՝ ինչ-որ վերացական կամ հոգևոր բան, բայց նրանց միասին պահելու համար անհրաժեշտ են նյութական խթաններ: Ձեզ հարկավոր չէ երես տալ մարդկանց՝ նրանց գերավճարելով, շատ ավելի կարևոր է ստեղծել անվտանգության զգացում, գիտակցություն, որ դուք հայրականորեն եք հոգ տանում նրանց մասին՝ մտածելով նրանց կարիքների մասին: Ուշադրություն դարձնելով ձեր ենթակաների նյութական կարիքներին դուք նաև բարոյական իրավունք եք ձեռք բերում նրանցից ավելին պահանջելու, երբ դա անհրաժեշտ է:

Քայլ 3: Հրամանատարը պետք է լինի առջևում

Էնտուզիազմը, որով մարդիկ շտապում են պաշտպանել ճիշտ գործը, վաղ թե ուշ մարում է: Կա մի բան, որը կարող է արագացնել սառեցման գործընթացը և, ավելին, դժգոհությունն ու տրտունջը, դա այն զգացողությունն է, որ առաջնորդներն իրենք չեն անում, ինչի համար պայքարում են: Հենց սկզբից ձեր զորքերը պետք է տեսնեն, որ դուք բոլորից առաջ եք, ինչ-որ բան զոհաբերում եք, կիսում եք ընդհանուր դժվարությունները: Ընդհանուր գործը նույնքան լուրջ եք ընդունում, որքան նրանք: Նրանց հետևից հրելու փոխարեն, այնպես արեք, որ նրանք վազեն՝ փորձելով հասնել ձեզ:

Քայլ 4. Կենտրոնացրեք *Ցին*[3]

Չինաստանի մշակույթում կա Ցի-ի հավատ, էներգիա, որը առաջ է մղում բոլոր կենդանի էակներին: Այս էներգիան կենդանացնում է ոչ միայն անհատ էակներին, այլև կոլեկտիվներին: Յուրաքանչյուր խումբ ունի Ցի-ի որոշակի մակարդակ՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական: Խմբի ղեկավարը պետք է զգա այս էներգիան և կարողանա շահարկել այն:

Անբանությունը կործանարար է Ցի-ի համար: Երբ զինվորները պարապ են մնում, նրանց մարտական ոգին ընկնում է: Մարդիկ սկսում են կասկածել, և եսասիրական դրդապատճառները հեշտությամբ գերակշռում են: Եթե բանակը պաշտպանության է անցնում և չափազանց երկար ժամանակ անգործ է մնում, սպասում է՝ փորձելով կռահել, թե ինչպես կվարվի թշնամին, դա նույնպես վնասակար ազդեցություն է ունենում Ցի-ի վրա: Հետևաբար, ձգտեք ապահովել, որ ձեր զինվորները անընդհատ զբաղված լինեն գործով, աշխատեն, առաջ շարժվեն իրենց նպատակին հասնելու ուղղությամբ: Մի ստիպեք նրանց տանջվել՝ սպասելով հաջորդ հարձակմանը, առաջ շարժվելը նրանց կխրախուսի նոր մարտերի: Հարձակողական գործողությունները օգնում են կենտրոնացնել Ցի-ն, մինչդեռ կենտրոնացված Ցի-ն լի է թաքնված ուժով:

---

[3] **Ցի** չինական փիլիսոփայության հիմնական հասկացություններից, կենսական ուժ՝ բոլոր կենդանի օրգանիզմների բաղկացուցիչ մաս: Ընդհանուր առմամբ նշանակում է աշխարհի նյութական հիմքը՝ մանրագույն մասնիկների տեսքով, որոնք, գտնվելով մշտական շնչառության մեջ, մերթ խտանում են՝ կազմելով իրեր, մերթ ցրվում՝ առաջացնելով իրերի փոփոխություններ և անհետացում: Բացի այդ Ցին նյութական ուժ է, էներգիա կամ արյան և շնչառության հետ կապված կենսական ուժ, այս որակով ցին մասնակցում է իրերի և մարդկանց գոյացման պրոցեսին: https://hy.wikipedia.org/wiki/%D5%91%D5%AB#

Քայլ 5: Խաղացեք զգացմունքների հետ

Մարդկանց ոգեշնչելու լավագույն միջոցը նրանց զգացմունքներին դիմելն է, այլ ոչ թե բանականությանը: Սակայն մարդիկ բնականաբար կասկածամիտ են, և եթե դուք ուղղակիորեն դիմում եք նրանց զգացմունքներին՝ օրինակ՝ կրակոտ ելույթ ունենալով, նրանք կարող են ձեզ խորամանկ, կեղծավոր մանիպուլյատոր համարել:

Զգացմունքներին դիմելը պահանջում է որոշակի նախապատրաստություն: Նախ անհրաժեշտ է հանգստացնել կասկածները, իսկ դրա համար անհրաժեշտ է ներկայացում բեմադրել, հետաքրքրել մարդկանց, ուշադրություն գրավել զվարճալի այուժեով: Այժմ, երբ խմբի անդամների զգացմունքների նկատմամբ վերահսկողությունը որոշ չափով թուլացել է, կարող եք աստիճանաբար մոտենալ ձեզ հետաքրքրող թեմային՝ նրբորեն ուղղորդելով նրանց ուրախությունից դեպի զայրույթ կամ վրդովմունք: Մարդկային հույզերի կառավարման վարպետների թատերական զգացողությունը իրենց արյան մեջ է: Նրանք գիտեն, թե երբ և ինչպես արագորեն դիպչել իրենց զինվորների հույզերի նուրբ լարերին:

Քայլ 6. Խստությունը համատեղեք բարության հետ

Մարդկանց կառավարման գործում գլխավորը կոշտության և բարի վերաբերմունքի, պատժի և խրախուսանքի միջև հավասարակշռություն պահելն է: Հաճախակի խրախուսելով դուք «կոտրելու» եք զինվորներին, և շուտով նրանք այդ ամենը ընդունելու են որպես կանոն: Չափազանց պահանջկոտությունն ու խստությունը հանգեցնելու է բարոյականության անկմանը: Դուք պետք է ընտրեք միջին գիծը և պահպանեք հավասարակշռությունը: Խրախուսանքները հազվադեպ դարձրեք, և այդ ժամանակ նույնիսկ պարզ գովասանքը, էլ չեմ ասում առատաձեռն պարգևի մասին, հատուկ նշանակություն կստանա: Զայրույթը և պատիժը պետք է լինեն նույնքան հազվադեպ: Կոշտություն պետք չէ. փաթեթավորեք այն արդար պահանջկոտությամբ, սահմանեք բարձր չափանիշներ, որոնց կատարումը ոչ բոլորն են կարող: Թող ձեր զինվորները մրցակցեն՝ միաժամանակ փորձելով հասնել ձեր հավանությանը: Ստիպեք նրանց ձգտել ձեզանից ավելի քիչ խստություն և ավելի շատ գովասանքներ տեսնել:

Քայլ 7. Ստեղծեք խմբի առասպել

Ամենաբարձր մարտական և բարոյական ոգի ունեցող բանակները սովորաբար նրանք են, որոնք արդեն անցել են մարտական փորձություն: Զինվորները, ովքեր կողք կողքի կռվել են մեկից ավելի արշավներում, անխուսափելիորեն մշակում են մի տեսակ առասպել՝ հիմնված անցյալի փառահեղ հաղթանակների հիշողությունների վրա: Այդպիսի խմբի ավանդույթներին և հեղինակությանը համապատասխան ապրելը պատիվ է: Նրանք, ովքեր չեն կարողանում համապատասխանել այդ պահանջներին և կորցնում են իրենց համազգեստի պատիվը, ամոթով են պատվում: Այսպիսի առասպել ստեղծելու համար դուք պետք է ձեր բանակը առաջնորդեք որքան հնարավոր է շատ մարտերում: Խելամիտ է սկսել հեշտ դեպքերից, որոնցում հաղթանակը երաշխավորված է: Սա կօգնի զինվորների մեջ վստահություն ներշնչել: Հաջողությունն ինքնին կօգնի ձեզ միավորել խումբը: Մտածեք կարգախոսների և խորհրդանիշների մասին, որոնք կաջակցեն առասպելին: Ձեր զինվորները կցանկանան պատկանել փառահեղ խմբի:

Քայլ 8. Եղեք անողոք նվնվոցների նկատմամբ

Եթե դուք թուլանաք կամ տատանվեք, տրտնջացողները, փնթփնթացողները և քրոնիկ դժգոհողները կարող են անկարգություններ և նույնիսկ խուճապ առաջացնել խմբում: Նրանք պետք է անմիջապես մեկուսացվեն և վերացվեն առաջին իսկ հնարավորության դեպքում: Ցանկացած խմբում կան մարդիկ, ովքեր կազմում են միջուկը՝ ամենաակտիվը, ամենաոգևորվածը և կարգապահը՝ ձեր լավագույն զինվորները: Ճանաչեք նրանց, խրախուսեք նրանց եռանդը և որպես օրինակ բերեք: Այդպիսի մարդիկ բնական հակակշիռ են դժգոհների և խուճապի մատնվածների համար:

ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. 1630-ականների սկզբին Քեմբրիջշիր կոմսությունից անգլիացի ազնվական Օլիվեր Կրոմվելի (1599-1658) հոգին ծանրցած էր, նրան չէին թողնում մահվան մտքերը: Խորը հոգեկան ճգնաժամից ելք փնտրելով՝ նա դիմեց պուրիտանական կրոնին, որից հետո նրա կյանքը փոխվեց ամենազարմանալի ձևով:

Գոյությունը լցվեց նոր իմաստով՝ Կրոմվելը վստահ դարձավ, որ հնարավորություն ունի հաղորդակցվել ուղղակիորեն Աստծո հետ: Այսուհետև նա հավատաց նախախնամությանը, որ ամեն ինչ տեղի է ունենում Աստծո կամքով, որ աշխարհում պատահականություններ չկան: Որքան անվճռական ու երկչոտ էր նա մինչ այժմ, այնքան նպատակասլաց էր այժմ: Նա իր մեջ տեսավ Աստծո ընտրյալին:

Մի քանի տարի անց Կրոմվելը մտավ խորհրդարան, որտեղ նա խոսում էր հասարակ ժողովրդի անունից, ովքեր տառապում էին արիստոկրատիայի ճնշումներից : Բայց նա զգաց, որ դա իր վերջնական նպատակը չէ, որ Աստված իրենից ավելին է ակնկալում, քան քաղաքականություն: Նա պատկերացրեց նոր խաչակրաց արշավանքը, որը ինքը պետք է առաջնորդեր: 1642 թվականին խորհրդարանը, որը անհաշտ պայքար էր մղում Կառլ I-ի դեմ, քվեարկեց թագավորի ծախսերը կրճատելու օգտին, եթե վերջինս չհամաձայներ սահմանափակել միապետական իշխանությունը: Կառլը մերժումով պատասխանեց այս պահանջին, որից հետո քաղաքացիական պատերազմ սկսվեց «կավալերների» (թագավորի կողմնակիցների, ովքեր երկար մազերով սանրվածքներ էին կրումում) և «կլորագլուխների» (ապստամբների, որոնց այդպես էին անվանում մազերի կարճ կտրվածքի համար) միջև: Խորհրդարանի ամենաթեժ կողմնակիցները պուրիտաններն էին, այսինքն՝ Կրոմվելի նմանները, ովքեր թագավորի հետ պատերազմում տեսնում էին իրենց հնարավորությունը՝ ավելի քան հնարավորությունը, իրենց կոչումը:

Չնայած Կրոմվելը ընդհանրապես ռազմական փորձ չուներ, նա շտապ իր հայրենի Քեմբրիջշիրից հավաքեց վաթսուն ձիավորներից բաղկացած խումբ: Կրոմվելի նպատակն էր ընգրկվել ինչ-որ գունդի կազմում և փորձ ձեռք բերեր: Մարտընչելով մեկ այլ հրամանատարի ղեկավարության ներքո նա մտադրվել էր դրսևորել իրեն :

Կրոմվելը միանգամայն վստահ էր հաջողության մեջ, քանի որ այն տեղում, որտեղ նա խոսում էր, այդ կողմը իրեն անպարտելի էր թվում: Ինչ էլ որ ասեք, աստված աջակցում էր նրանց, և նրա բոլոր մարդիկ հավատում էին Տիրոջը և որ իրենք կոչված էին կառուցելու նոր Անգլիա՝ արդար և բարեպաշտ:

Չնայած փորձի պակասին, Կրոմվելը մի տեսակ ռազմական ինտուիցիա ուներ: Նա հորինեց ռազմական գործողություններ վարելու հատուկ միջոց, որը հիմնված էր

թեթև, արագ և շարժուն հեծելազորի օգտագործման վրա, և ծառայության առաջին իսկ ամիսներին նա իրեն ցույց տվեց որպես համարձակ և ակտիվ հրամանատար։ Կրոմվելին վստահեցին ավելի մեծ ջոկատի հրամանատարությունը, բայց շատ շուտով նա հասկացավ, որ չափազանց գերագնահատում է իր կողքին կանգնած կռվողների մարտական ոգին։ Բազմակի անգամ էր պատահել, որ նա հեծելազորը գրոհի էր առաջնորդել՝ ցանկանալով ճեղքել թշնամու շարքերը, բայց զզվանքով ու դառնությամբ տեսնել էր, թե ինչպես զինվորները, հրամաններին չենթարկվելով, թալանով էին զբաղվում թշնամու ճամբարում։ Երբեմն նա փորձում էր իր մարդկանցից մի քանիսին պահել պահեստազորում՝ մարտի թեժ պահին որպես ուժեղացում օգտագործելու համար, բայց միակ հրամանը, որ նրանք ցանկանում էին լսել, հարձակվելն էր, իսկ թիկունքում նրանք անկարգ, անկազմակերպ ամբոխ էին։ Պատկերացնելով որպես խաչակիրներ՝ Կրոմվելի մարդիկ մարտում իրենց պահում էին որպես փողի համար կռվող վարձկաններ և արկածախնդիրներ։ Նրանք ոչ մի օգուտ չէին տալիս։

1643 թվականին, երբ Կրոմվելը ստանձնեց իր սեփական գնդի հրամանատարությունը, որոշեց խզել կապերը անցյալի հետ։ Այդ պահից սկսած՝ նա հավաքագրեց ոչ թե պարզապես ցանկացած մեկին, այլ միայն որոշակի ուղղվածություն ունեցող մարդկանց։ Կրոմվելը հետաքրքրվում էր նրանցով, ովքեր, ինչպես ինքը, ունեին անկեղծ հավատք, ովքեր ունակ էին կրոնական բացահայտումների և ներթափանցումների։ Նա նույնականացնում էր նրանց, ստուգում նրանց հավատքի անկեղծությունն ու խորությունը։ Խզելով հին ավանդույթը՝ Կրոմվելը նախընտրում էր հասարակ մարդկանց արիստոկրատներից՝ նրանց դարձնելով սպաներ։ Ընկերոջը հասցեագրված նամակում նա նշում էր. «Ես կնախընտրեի ունենալ պարզ գյուղացի ապուշ, որը գիտի, թե ինչի համար է պայքարում և սիրում է այն, ինչ գիտի, քան մեկը, ում անվանում են ջենտլմեն, բայց իրենից ոչինչ չի ներկայացնում»։ Կրոմվելը պահանջում էր, որ իր նորակոչիկները սաղմոսներ երգեն և միասին աղոթեն։ Խստորեն պատժելով կարգազանցներին, նա սովորեցնում էր նրանց տեսնել Աստծո ծրագրի մի մասը իրենց արած ամեն գործում։

Մյուս կողմից, նա հայրաբար հոգ էր տանում իր զինվորների մասին, ինչն այն ժամանակ անսովոր էր։ Հետևում էր, որ նրանք լավ սնվեն, հագնվեն, որ ժամանակին և լավ վարձատրվեն։

Այժմ, երբ Կրոմվելի բանակը մարտի էր մեկնում, այդ ուժի հետ պետք էր հաշվի նստել։ Հեծյալները ձիավարում էին խիտ շարքերով՝ բարձրաձայն երգելով կրոնական սաղմոսներն ու օրհներգերը։ Մոտենալով թագավորական զորքերին նրանք միանգամից անցում էին վարագարշավի, և այս ամենը զարմանալիորեն տարբերվում էր այլ ստորաբաժանումների անկանոն և իմպուլսիվ պահվածքից ։ Նույնիսկ թշնամու հետ ձեռնամարտի ժամանակ նրանք կարողանում էին պահպանել իրենց բնորոշ կարգը, ավելին, նրանց նահանջները զարմանալիորեն կարգավորված էին։ Մահվան վախը խորթ էր այդ մարդկանց, քանի որ նրանք հավատում էին, որ Աստված իրենց հետ է։ Նրանք կարող էին շարժվել դեպի բլուրը, ուղղակիորեն հակառակորդի կրակի ներքո, երթային կարգով, առանց տապալելու քայլքը։ Իր հեծելազորում լիարժեք կարգուկանոն հաստատելով՝ Կրոմվելը հասավ անսահման ճկունության։ Նրա զորքերը մեկը մյուսի հետևից հաղթանակեցին ճակատամարտերում։

1645 թվականին Կրոմվելը դարձավ նոր մոդելի բանակի հեծելազորի գեներալ-լեյտենանտ, որի միջուկը նրա «երկաթյակողերն» էին։ 1645 թվականի հունիսի 14-ին Նեյսբիի ճակատամարտի հաղթանակում նրա զունդը վճռորոշ դեր խաղաց։ Մի քանի

օր անց Կրոմվելի հեծելազորը վերջապես ջախջախեց ռոյալիստներին Լանգպորտում՝ գործնականում ավարտելով քաղաքացիական պատերազմի առաջին փուլը:

Մեկնաբանում

Այն փաստը, որ Կրոմվելը հաճախ դասվում է պատմության մեծ հրամանատարների շարքում, ևս մեկ անգամ վկայում է, որ նրան հաջողվեց զարմանալիորեն գրագետ ներթափանցել պատերազմի մեքենայի գործունեության բնույթի մեջ: Քաղաքացիական պատերազմի երկրորդ փուլում նա նշանակվեց «կլորագլուխների» բանակի գլխավոր հրամանատար, իսկ ավելի ուշ՝ Կարլ թագավորի մահապատժից հետո, դարձավ Անգլիայի լորդ-պրոտեկտոր[4]: Չնայած նա իր ժամանակից առաջ էր անցել շարժական ջոկատների տեսլական գաղափարով, բայց նա իրեն ցույց չտվեց որպես փայլուն ստրատեգ կամ մարտավար: Հաջողության գաղտնիքը նրա հեծելազորի բարձր բարոյական ոգու և կարգապահության մեջ էր, և նրան հաջողվեց հասնել դրան՝ ճիշտ մոտենալով հավաքագրվողների ընտրությանը՝ մարդկանց, ովքեր անկեղծորեն և խորապես համոզված էին իրենց գործի ճշմարտացիության մեջ, և որ պետք է պաշտպանեին այդ գաղափարը: Այդպիսի մարդիկ բաց էին նրա ազդեցությանը և անվերապահորեն ընդունում էին կարգապահության պահանջները: Ամեն մի նոր հաղթանակի հետ մեծանում էր նրանց նվիրվածությունը, մեծանում էր նաև բանակի համախմբվածությունը: Կրոմվելը կարող էր նրանցից շատ բան պահանջել, նա վստահ էր դրանում:

Կատարեք հետևություններ. նախևառաջ, դուք պետք է լուրջ վերաբերվեք ձեր զորակոչին: Հավանաբար, շատերից կլսեք հավատարմության մեջ վստահեցումների մասին, բայց երբ գա վճռական ճակատամարտի օրը, դուք կհասկանաք, որ նրանք պարզապես աշխատանք էին փնտրում: Այս տեսակի զինվորները ոչ այլ ինչ են, քան վարձկաններ, և դուք նրանց հետ շատ հեռու չեք գնա: Ձեզ անհրաժեշտ են իրական, անկեղծ հետևորդներ, և նույնիսկ ամենատպավորիչ ծառայողական ցուցանիշները պակաս կարևոր են, քան հավատարմությունը և զոհաբերության պատրաստակամությունը: Համոզված կողմնակիցները սկզբում բաց են ձեր ազդեցության համար, և նրանց աջակցությամբ շատ ավելի հեշտ է ամրապնդել մարտական ոգին և կարգապահությունը: Այս մարդիկ կկազմեն այն թիմի միջուկը, որի վրա կարող եք հույս դնել: Նրանք կօգնեն ուրիշներին հասկանալ ձեր հրահանգները և, ի վերջո, ամբողջ բանակը կհասցնեն արժանի մակարդակի:

Աշխատք, որքան հնարավոր է մեր նյութական աշխարհում, ձեր ճակատամարտը վերածել հոգևոր արշավի, վեհ գործի, որը գերազանցում է ներկայիս առօրեականությունը:

2. Մ.թ.ա. 218 թվականի մայիսին Կարթագենի (ժամանակակից Թունիս) մեծ զորավար Հաննիբալը ձեռնամուխ եղավ մեծածավալ ծրագրի իրականացմանը: Նա Իսպանիայի, Գալիայի և Ալպերի միջով բանակը տարավ դեպի Հյուսիսային Իտալիա: Նրա նպատակն էր հաղթել հռոմեական լեգեոններին իրենց սեփական հողում և վերջ դնել Հռոմի նվաճողական քաղաքականությանը, որը երկար սպասված էր:

---

[4] **Լորդ-պրոտեկտորը** (անգլ. Lord Protector) պետության ղեկավարի հատուկ տիտղոս է, որն օգտագործվում է բրիտանական սահմանադրական իրավունքում և ունի երկու իմաստ՝ 1) Անգլիայում և Շոտլանդիայում, 13-17-րդ դարերում, ռեգենտի պաշտոն այն ժամանակահատվածում, երբ միապետը անչափահաս էր կամ որևէ այլ պատճառով չէր կարող ինքնուրույն կառավարել, և 2) Անգլիական Հանրապետությունում՝ պետության ղեկավարի պաշտոն: https://ru.wikipedia.org/wiki/%D0%9B%D0%BE%D1%80%D0%B4-%D0%BF%D1%80%D0%BE%D1%82%D0%B5%D0%BA%D1%82%D0%BE%D1%80

Ալպերը գրեթե անհաղթահարելի խոչընդոտ էին նրանց ճանապարհին: Ինչ խոսք, մի ամբողջ բանակի անցումը բարձր լեռներով իսկապես աննախադեպ էր: Եվ այնուամենայնիվ, այդ տարվա դեկտեմբերին Հանիբալը, չնայած բոլոր դժվարություն-ներին, հասավ Հյուսիսային Իտալիա ՝ անակնկալ մատուցելով հռոմեացիներին, իսկ տարածքը լիովին անպաշտպան էր՝ բաց ներխուժման համար:

Հաննիբալը, իհարկե, ստիպված էր բարձր գին վճարել այս հաջողության համար: Արշավը սկսած 102 հազար զինվորներից միայն 26 հազարը կենդանի մնացին, ովքեր նրանք ֆիզիկապես և հոգեպես ուժասպառ էին ու հյուծված: Ամենավատն այն էր, որ վերականգնվելու համար ժամանակ չէր մնացել: Հռոմեական բանակն արդեն Պո գետի մատույցներում էր՝ կարթագենյան ճամբարից ընդամենը մի քանի մղոն հեռավորության վրա:

Հռոմեական ահեղ լեգեոնների հետ առաջին մարտի նախօրեին Հանիբալը պետք է ինչ-որ կերպ վերակենդանացներ իր զինվորներին: Նա որոշեց ներկայացում կազմակերպել և հրամայեց բերել մի խումբ գերիների ու կագադրեց նրանց մահու և կենաց կռվել, ինչպես գլադիատորները, զինվորների աչքի առաջ: Հաղթողներին նա խոստացավ ազատություն և իրավունք պայքարել իր բանակի շարքերում: Գերիները համաձայնվեցին, և սկսվեց մի քանի ժամ տևած արյունալի տեսարան, որը Հանիբալի մարտիկներին ամբողջովին շեղեց իրենց առօրյա դժվարություններից և ցավոտ մտորումներից:

Երբ մարտն ավարտվեց, Հաննիբալը դիմեց իր զինվորներին: Նա ասաց, որ մարտը շատ զվարճալի էր, քանի որ գերիները կռվում էին համառորեն և չխնայելով իրեց ուժերը: Մասամբ դա պայմանավորված էր նրանով, որ նույնիսկ ամենաթույլ մարդիկ ուժ են գտնում, երբ պարտությունը նշանակում է մահ, բայց կար նաև մեկ այլ պատճառ. գերիները հույս ունեին միանալ կարթագենացիների փառահեղ բանակին, դժբախտ և արհամարհված ստրուկներից վերածվել ազատ զինվորների, որոնք պայքարում են մեծ գործի համար՝ ատելի հռոմեացիների դեմ: «Դուք,- շարունակեց Հաննիբալը,- գտնվում եք ճիշտ նույն վիճակում: Դուք պատրաստվում եք կռվել շատ ուժեղ թշնամու դեմ: Դուք հեռու եք տնից, օտար երկրում, որտեղ նահանջելու տեղ չունեք. որոշ իմաստով դուք էլ գերիներ եք, ինչպես նրանք: Ընտրությունը պարզ է՝ ազատություն կամ ստրկություն, հաղթանակ կամ մահ: Բայց կռվեք այնպես, ինչպես այսօր կռվեցին այս մարդիկ, և դուք կհաղթեք»: Մարտը և Հաննիբալի ելույթը մեծ ազդեցություն թողեց զինվորների հոգում, և հաջորդ օրը նրանք կատաղի կռվեցին ոչ թե կյանքի, այլ մահվան համար և հաղթեցին:

Այս հաղթանակին հաջորդեցին մյուսները :

Անցավ գրեթե երկու տարի, և հակառակորդները հանդիպեցին Կաննեիում (Կաննեի ճակատամարտ): Մինչև մարտի սկսվելը բանակները դիրքավորվեցին միմյանց տեսանելիության սահմաններում, այնպես որպեսզի կարթագենցիները տեսնեին, թե որքանով են հռոմեացիների ուժերը գերազանցում իրենց ուժերը: Շարքերում վախեցած շառաչ անցավ, և բոլորը լռեցին: Կարթագենցի սպաներից մեկը՝ Գիսգո անունով, առաջ անցավ՝ զննելով հռոմեական հորդաները: Հաննիբալի առջև կանգ առնելով նա դողացող ձայնով դիմեց գեներալին՝ նրա ուշադրությունը հրավիրելով ուժերի անհավասարությանը: «Դուք անտեսել եք մեկ հանգամանք», - հանգիստ պատասխանեց Հաննիբալը: «Մյուս կողմում գտնվող բազմաթիվ մարդկանց մեջ չկա Գիսգո անունով ոչ մեկը»: Գիսգոն հռհռաց, և նրանք, ովքեր լսում էին զրույցը, նույնպես ծիծաղեցին, և կատակը տարածվեց շարքերում՝ անմիջապես թուլացնելով լարվածությունը: Ոչ, հռոմեացիները Գիսգո չունեին: Միայն կարթագենցիներն ունեին

իրենց Գիսգոն, և միայն նրանք ունեին Հաննիբալ: Նման պահին կատակելու ունակ առաջնորդը պետք է որ լիներ բացարձակապես վստահ հաղթանակի մեջ, և եթե առաջնորդը հենց Հաննիբալն էր, ապա այդպիսի վստահությունը, հավանաբար, լիովին արդարացված էր: Անհանգստությունը քշվեց զինվորների դեմքերից, կարծես քամին տարավ, և զորավարի սառը վստահությունը փոխանցվեց բոլորին: Այդ օրը Կաննեիում[5] կարթագենցիները ջախջախիչ պարտության մատնեցին հռոմեացիներին:

Մեկնաբանում

Հաննիբալը հազվագյուտ ոգեշնչող ունակություն ուներ: Նմանատիպ հանգամանքներում ուրիշները կսկսեին բողոքել, կկարդային կրքոտ ճառեր: Նա հասկանում էր, որ խոսքերին հույսը դնելը նշանակում է կորցնել գործը: Բառերը միայն մակերեսային են, դրանք չեն դիպչում ամենախորը զգացմունքներին, բայց առաջնորդը պետք է թափանցի զինվորների սրտերը, եռացնի նրանց արյունը, ազդի նրանց տրամադրության վրա: Հաննիբալը չէր գործում ուղիղ ձևով: Նախ նա թեթևացնում էր լարվածությունը, անհանգստության զգացումը, շեղում զինվորներին իրենց խնդիրներից և օգնում նրանց միասնական զգալ: Միայն դրանից հետո նա դիմում էր նրանց, և այդ ժամանակ նրա ելույթը ամբողջությամբ գրավում էր մարդկանց զգացմունքները:

Կաննեիում մեկ լավ մտածված կատակը բավարար էր արդյունքի հասնելու համար: Հաննիբալը երկարաշունչ ճառով բանակին իր հաղթանակի վստահության մեջ համոզելու փոխարեն ցույց տվեց այդ վստահությունը: Պարզապես Գիսգոյի մասին կատակի վրա ծիծաղելով մարդիկ միավորվեցին՝ հասկանալով այս պարզ խոսքերի ներքին իմաստն ու նախապատմությունը: Նման իրավիճակում ճառերն ավելորդ էին: Հաննիբալը հասկանում էր, որ իր զինվորների տրամադրության աննշան փոփոխությունը կարող է փոխել իրադարձությունների ընթացքը՝ անխուսափելի թվացող պարտությունը վերածելով մեծ հաղթանակի:

Ինչպես Հանիբալը, այնպես էլ դուք փորձեք նրբանկատորեն և աննկատորեն ազդել մարդկանց զգացմունքների վրա: Ստիպեք նրանց լաց լինել կամ ծիծաղել մի բանի վրա, որը, կարծես, ուղղակիորեն կապված չէ հրատապ խնդիրների և իրադարձությունների հետ: Զգացմունքները վարակիչ են, դրանք միավորում են մարդկանց, ստիպում են զգալ ընդհանրությունը:

Հռետորաբանությունն ու բոցաշունչ կոչերը միայն նյարդայնացնում և վիրավորում են մեզ, մենք շատ լավ հասկանում ենք, թե ինչ է կանգնած դրանց հետևում, մենք ծայրեծայր տեսնում ենք հռետորներին:

Ոգեշնչելը բոլորովին այլ, շատ ավելի նուրբ արվեստ է: Գործելով ոչ թե ուղղակիորեն, ձեր հուզական կոչը փոխանցելով մարդկանց, դուք կներթափանցեք նրանց հոգիներ՝ փոխարենը տարահոսելով մակերեսին:

---

[5] **Կաննեի ճակատամարտ:** Վերականգնվելով Տրեբիայի և (մ.թ.ա. 218 թվական) և Տրազիմենյան լճի (մ.թ.ա. 217 թվական) ճակատամարտերում կրած պարտություններից, հռոմեացիները 86,000 զորքով որոշեցին կանգնեցնել Հաննիբալին Կաննեի մոտ: Հռոմեացիները դասավորեցին իրենց ծանր հետևակը ավելի խորը, քան սովորաբար, իսկ Հաննիբալը օգտագործեց կրկնակի ծածկոցի մարտավարությունը: Վերջինիս էֆֆեկտիվության միջոցով հռոմեացիները, որպես մարտունակ ուժ, ոչնչացվեցին: Հաղթանակից հետո, Կապուան և մի շարք իտալական քաղաք-պետություններ դուրս եկան Հռոմի Հանրապետության դաշինքից և միացան Կարթագենին: https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D5%AB_%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF

3. 1796 թվականի ապրիլին քսանվեցամյա Նապոլեոն Բոնապարտը նշանակվեց ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար, ով այդ ժամանակ Իտալիայում կռվում էր ավստրիացիների դեմ: Շատ սպաներ այս նշանակումը ընդունեցին որպես զվարճալի կատակ, ծաղրանք: Նրանք տեսնում էին, որ նոր գլխավոր հրամանատարը չափազանց երիտասարդ է, չափազանց անփորձ, չափազանց ցածրահասակ՝ ըստ էության, պարզապես բավականաչափ խնամված չէր՝ «գեներալի» դերը խաղալու համար: Շարքային զինվորների շրջանումն էլ ամեն բան հարթ չէր: Նրանց վարձատրությունը ցածր էր, վատ էին կերակրված, այնպես որ նրանք ավելի ու ավելի քիչ պատրանքներ ունեին այն մեծ գործի՝ Ֆրանսիական հեղափոխության վերաբերյալ, որի համար պայքարում էին: Արշավանքի առաջին շաբաթներին Նապոլեոնը հնարավորինս պայքարեց, որպեսզի նրանք ավելի լավ կռվեն, բայց զինվորները համառորեն դիմադրեցին նրա ջանքերին:

Մայիսի 10-ին Նապոլեոնը սոված ու հոգնած զորքով մոտեցավ Ադդա գետին՝ Լոդի կոչվող վայրում: Մինչ այժմ նրան հաջողվել էր քշել ավստրիացիներին, բայց Լոդիի կամուրջը հարմար դիրք էր, և ավստրիացիներին հաջողվել էր հենակետ ձեռք բերել: Կամրջի երկու կողմերում կային լավ քողարկված ավստրիական հրետանային մարտկոցներ: Կամրջի գրավումը հղի էր մեծ կորուստներով, բայց հանկարծ ֆրանսիացիները նկատեցին, թե ինչպես է Նապոլեոնը, մեծ ռիսկի դիմելով, իր տեղից ցատկեց և առաջ շարժվեց: Բոցավառ կոչով սիգարշավելով գրենադերների առջև, նա շտապեց ուղիղ ավստրիացիների ուղղությամբ և «Vive la Republique!» բղավելով ներխուժեց նրանց դիրքերը: Ակամայից տարված նրա մղումով ավագ սպաները զինվորներին բարձրացրին հարձակման: Ֆրանսիացիները վերցրեցին կամուրջը, և այս համեմատաբար փոքր գործողությունից հետո բանակը անսպասելիորեն տեսավ Նապոլեոնին նոր կողմով: Հարգանքի տուրք մատուցելով նրա քաջությանը և խիզախությանը՝ զինվորներն այժմ համակրանքով նրան անվանեցին փոքրիկ կապրալ: Պատմությունը, թե ինչպես Նապոլեոնը նետվեց թշնամու վրա Լոդիում, շրջանցեց բոլոր գնդերը:

Արշավը շարունակվում էր, Նապոլեոնը մեկը մյուսի հետևից հաղթանակներ էր տոնում: Նրա և իր զինվորների, ինչպես նաև գեներալների միջև սերտ կապ էր հաստատել և դա ավելին էր, քան պարզ կապվածությունը:

Մարտերի միջև ընկած դադարներում Նապոլեոնը, մեկընդմեջ, շրջելով զոքի գիշերակացքում՝ հավասարը հավասարի շփվում էր հանգստացող զինվորների հետ: Չնայած իր սրընթաց վերելքին, նա չէր մոռանում, որ սկսել է հասարակ թնդանոթաձիգից և ընդհանուր լեզու էր գտնում շարքայինների հետ շփվելիս, ինչպես և ոչ մի այլ գեներալ: Նա գիտեր յուրաքանչյուրին անունով, նա գիտեր նրանց պատմությունները, նա նույնիսկ հիշում էր, թե ով որ ճակատամարտում վիրավորվեց: Զինվորներից ոմանց, կարող էր թփթփացնել ուսին կամ սեղմել ականջի բլթակը՝ ի նշան ընկերական տրամադրվածության :

Զինվորները Նապոլեոնին այնքան էլ հաճախ չէին տեսնում, բայց երբ դա տեղի ունենում, նրա ներկայությունը ընկալվում էր որպես էլեկտրական արտանետում: Նա ճշգրտորեն ընտրում էր այն պահը, երբ պետք է հայտնվեր նրանց առջև՝ մեծ ճակատամարտի նախօրեին, կամ երբ մարտական ոգին սկսում էր անկում ապրել: Եվ դա, իհարկե, նրա անձնական որակների մեջ էր: Այդ պահերին նա հիշեցնում էր բոլորին, որ միասին պատմություն են կերտում: Եթե ջոկատը պետք է գտնվեր ավանգարդում, եթե անձնակազմը ինչ-որ բանից անհանգստացած էր, նա, ձին կանգնեցնում էր վերջույթների վրա ու բացականչում. «Երեսունութերորդ: Ես

հավատում եմ քեզ, ես ճանաչում եմ քեզ: Վերցրու այս գյուղը ինձ համար՝ եղիր առջևում»: Նրա զինվորներն այն զգացողությունն ունեին, որ նրանք ոչ միայն հրաման էին կատարում, այլև Նապոլեոնի հետ միասին ապրում են ամենամեծ դրաման, որում նրանք վերջին դերակատարները չէին:

Նապոլեոնը հազվադեպ էր զայրույթ ցուցաբերում: Բայց եթե դա տեղի էր ունենում, նրա ենթակաները տխրում կամ մեղավորություն էին զգում : Ավելի ուշ, նույն իտալական արշավի ընթացքում, ֆրանսիական մի քանի գնդեր ավստրիացիների ճնշման տակ ստիպված եղան ամոթով նահանջել: Այս նահանջը ոչ մի արդարացում չուներ: Նապոլեոնն անձամբ ժամանեց գնդերի գտնվելու վայրը: «Զինվորներ: - Ես դժգոհ եմ ձեզանից, - ասաց նա, և նրա մոխրագույն աչքերում կարծես բարկացած բոց էր մոլեգնում : - Դուք ոչ քաջություն, ոչ կարգապահություն, ոչ էլ տոկունություն ցույց տվեցիք:.. Դուք թույլ տվեցիք, որ ձեզ դուրս մղեն այնպիսի դիրքից, որտեղ մի բուռ մարդ կարող էր կանգնեցնել մի ամբողջ բանակ: Երեսունիններորդ և ութսունհինգերորդ գնդերի զինվորներ, դուք ֆրանսիացի զինվորներ չեք: Շտաբի պետ, հրամայում եմ ձեզ այդ գնդերը հանել ցուցակներից: Դրանք այլևս Ֆրանսիայի իտալական բանակի մաս չեն կազմում»: Զինվորները ցնցվեցին: Ինչ-որ մեկը հեկեկում էր, մյուսները աղաչում էին նրանց ևս մեկ հնարավորություն տալ: Այս ժամանակից ի վեր երեսունիններորդ և ութսունհինգերորդ գնդերը առանձնանում էին այնպիսի ուժով և ռազմական քաջությամբ, որը նրանք նախկինում երբեք չէին ցուցաբերել:

Մի քանի տարի անց, դժվարին արշավի ժամանակ, ֆրանսիացիները մեծ դժվարությամբ հաղթանակ կորզեցին Բավարիայում: Ճակատամարտից հետո, առավոտյան, Նապոլեոնն այցելեց թեթև հետևակի տասներեքերորդ գնդի գտնվելու վայրը, որը առանցքային դեր էր խաղացել ճակատամարտում, և գնդապետին խնդրեց իրեն տալ ամենահամարձակ մարտիկի անունը: Գնդապետը մի պահ մտածելուց հետո, արտաբերեց. «Սիր, կարծում եմ, որ սա գնդի ավագ թմբկահարն է»: Նապոլեոնը ցանկացավ տեսնել քաջարի երաժշտին, որը դողալով ներկայացավ: «Ինձ զեկուցեցին, որ դու աչքի ես ընկել մարտում, որ դու այդ գնդի խիզախ զինվորն ես: Քեզ Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ եմ դարձնում և չորս հազար ֆրանկ թոշակով բարոնի տիտղոս եմ շնորհում»: Զինվորները շնչակտուր եղան: Նապոլեոնը հայտնի էր նրանով, որ կարող էր առատաձեռնորեն պարգևատրել արժանավորներին՝ ստիպելով ցանկացած հասարակ մարդու հուսալ, որ ինքը կարող է դառնալ մարշալ, եթե հավատարմորեն ծառայի: Բայց որպեսզի թմբկահարը մի ակնթարթում բարոնի վերածվի՝ դա չլսված բան էր: Զարմանալի պարգևի լուրը արագորեն տարածվեց զինվորների և այլ գնդերի մեջ և զարմանալի ազդեցություն ունեցավ նրանց վրա՝ հատկապես ոգևորելով նորեկներին, ովքեր դեռ չէին ներքաշվել բանակային կյանքի մեջ և տառապում էին կարոտի զգացումից:

Բոլոր երկար, արյունալի արշավներում և նույնիսկ նրա ջախջախիչ պարտությունների ժամանակ՝ Ռուսաստանից նվաստացուցիչ փախուստ, աքսոր Էլբա կղզի, Վաթերլոյի ճակատամարտ, Նապոլեոնի մարդիկ անձնուրացորեն նվիրված էին նրան, պատրաստ էին մինչև վերջ գնալ փոքրիկ կապրալի հետևից:

Մեկնաբանում

Նապոլեոնը ոչ միայն մեծ զորավար էր, այլև հիանալի հասկանում էր մարդկանց և գիտեր, թե ինչպես կառավարել նրանց: Նա կարողացավ միլիոնավոր անկարգ, անտաշ, բռի երիտասարդների, ովքեր արբեցած էին հեղափոխական ազատության օդով, վերածել միասնական, հաղթական բանակի: Նրա բանակում տիրող բարձր

մարտական ոգին հատկապես ցայտուն էր, եթե հիշեք, թե ինչ ծանր փորձությունների միջով են նրանք անցել փոքրիկ կապրալի հրամանատարության ներքո։

Իր բանակը ստեղծելիս Նապոլեոնը օգտագործեց բոլոր հնարքները և բաց չթողեց ոչ մի հնարավորություն։ Նա մարդկանց միավորեց վեհ գաղափարի շուրջ՝ սկզբում խոսքը հեղափոխության իդեալների մասին էր, ապա՝ իր սիրելի Ֆրանսիայի փառքի մասին, որը մեծանում և վերածվում էր կայսրության։ Նա լավ էր վերաբերվում ենթականերին, բայց միևնույն ժամանակ չէր հանդուրժում անարդարությունը կամ երես չէր տալիս նրանց։ Նա դիմում էր ոչ թե ագահությանը, ոչ թե փող աշխատելու ցանկությանը, այլ փառք և ճանաչում ձեռք բերելու ցանկությանը։ Նա միշտ առաջնում էր՝ կրկին ու կրկին ցուցադրելով քաջություն և խիզախություն։ Նա թույլ չէր տալիս մարդկանց լճանալ և ձանձրանալ։ Մեկ արշավը դեռ չավարտված, նորն արդեն առջևում էր, ինչը նշանակում էր ռազմական փառքով ծածկվելու նոր հնարավորություն։ Նա գիտեր, թե ինչպես կապել մարդկանց իր հետ՝ հմտորեն և տաղանդավոր խաղալով զգացմունքների հետ։ Նրա զինվորները զգում էին, որ իրենք ոչ միայն բանակի մաս են կազմում, այլև լեգենդի, առասպելի մաս, երբ գրոհում էին կայսերական արծիվների տեսքով բրոնզե գագաթներով շտանդարտների ներքո։

Սովորեք վարպետից։ Դուք կարող եք վերահսկել մարդկանց միայն մշտական լարվածություն, հետաքրքրություն և սպասում պահպանելով։ Նախ, ստեղծեք կապ ձեր զինվորների և ձեր միջև։ Նրանք հարգում են ձեզ, հիանում են ձեզնով, նույնիսկ մի փոքր վախենում են ձեզանից։ Հիմա, ձեր կապն ամրապնդելու համար մի փոքր հետ քաշվեք, շրջապատեք ձեզ որոշակի տարածությամբ։ Ձեր միջև դեռ կա ջերմություն, բայց դուք հստակեցրել եք, որ կա հեռավորություն, կամ գոնե դրա մի փոքր ակնարկ։ Երբ կապը ձևավորվի, ավելի քիչ ներկայացեք։ Թող ձեր պարգևներն ու պատիժները լինեն հազվադեպ և անսպասելի՝ սխալների կամ հաջողությունների համար, որոնք այդ պահին կարող են փոքր թվալ, բայց խորհրդանշական նշանակություն ունենալ։ Կարևոր է հասկանալ, որ երբ մարդիկ պարզեն, թե ինչն է ձեզ դուր գալիս և ինչն է ձեզ նյարդայնացնում, կա վտանգ, որ նրանք կվերածվեն մարզված պուդելների, որոնք ամեն ինչ անում են լավ վարքագիծ ցուցաբերելու համար՝ գովասանքի արժանանալու համար։ Պահեք նրանց լարվածության մեջ։ Ստիպեք նրանց անընդհատ մտածել ձեր մասին, և, ցանկանալով հաճոյանալ ձեզ, մինչև վերջ չիմանալով, թե ինչ է պետք անել դրա համար։ Նրանց թակարդը գցելով՝ դուք ձեռք եք բերում մագնիսական ուժ ։ Հարցի նկատմամբ հետաքրքրությունը կառաջանա ինքաբերաբար։

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Ճանապարհն այն է, երբ ժողովուրդը հասնում է այն կետին, երբ նրա մտքերը նույնն են, ինչ կառավարչինը, երբ ժողովուրդը պատրաստ է մեռնել նրա հետ, պատրաստ է ապրել նրա հետ, երբ նա չգիտի ո՛չ վախ, ո՛չ կասկած:

Սուն Ցզի (մ.թ.ա. IV դար)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Մարտական ոգին վարակիչ է, բայց պակաս վարակիչ չէ նաև դրա հակառակը՝ վախն ու դժգոհությունը, որոնք կարող են անտառային հրդեհի պես տարածվել մարդկանց շրջանում։ Դրա դեմ պայքարելու միակ միջոցը վտանգավոր տրամա-

դրությունները սկզբնական շրջանում զսպելն է, նախքան դրանք խուճապի կվերածվեն:

Մ.թ.ա. 58 թվականին, երբ Հուլիոս Կեսարը Գալլական պատերազմների թեժ պահին պատրաստվում էր գերմանացի առաջնորդ Արիովիստուսի հետ ճակատամարտի, հռոմեացիների շրջանում լուրեր տարածվեցին հակառակորդի քանակական գերազանցության և նրանց անհավանական դաժանության մասին: Տրամադրությունը մոտ էր խուճապի, նույնիսկ ապստամբության: Կեսարը չհապաղեց: Նախևառաջ նա հրամայեց բացահայտել և կալանել լուրեր տարածողներին: Այնուհետև նա անձամբ դիմեց լեգեոներներին՝ հիշեցնելով նրանց իրենց քաջարի նախնիների մասին, որոնք կռվել էին գերմանական ցեղերի դեմ և փառահեղ հաղթանակներ տոնել: Նա՝ Կեսարը, ցանկություն չուներ մարտի մեջ մտնել թույլերի հետ միասին: Միայն տասներորդ լեգեոնը, կարծես, չէր տրվել խուճապին և Կեսարը որոշեց միայն այս լեգեոնին առաջնորդել թշնամու դեմ: Մինչ Կեսարը պատրաստվում էր արշավանքի, մնացած զինվորները ամաչելով աղաչում էին ներել իրենց և առաջնորդել մարտի:

Կեսարը ակնհայտ դժկամությամբ ընդառաջեց խնդրատուներին: Երեկվա վախկոտները կռվում էին առյուծի պես: Այսպիսի դեպքերում դուք նույնպես պետք է գործեք Կեսարի օրինակով՝ ստիպելով որպեսզի խուճապի ալիքը հետ քաշվի: Մի՛ վատնեք ժամանակ և գործ մի՛ ունեցեք ամբողջ խմբի հետ: Նրանք, ովքեր լուրեր են տարածում, խուճապ են սերմանում կամ ապստամբություն են հրահրում, սովորաբար մի տեսակ խելագարություն են ապրում և աստիճանաբար կորցնում են կապը իրականության հետ:

Դիմեք նրանց արժանապատվությանն ու պատվին, ստիպեք նրանց այրող ամոթ զգալ թուլության և խելագարության պահի համար: Հիշեցրեք նրանց անցյալի նվաճումների մասին, թող իմանան, որ հիասթափված եք, որ մարդիկ չեն արդարացրել ձեր սպասելիքները: Այս կերպ նրանց հրապարակավ ամոթանք պատճառելով՝ դուք կօգնեք նրանց արթնանալ և փոխել իրենց վարքագիծը:

Սկիզբը.

1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf

Աղբյուրը. https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi